ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

30 Դեկտեմբեր 2015 թիվ 169-Հ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի N 667-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 2-ի N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 2-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2013 թվականի օգոստոսի 2-ի «Գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 667-Ա հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Հրամանի 1-ին կետի 1-ին, 2-րդ, 5-րդ ենթակետերով հաստատված 1.1, 1.2, 1.3, 1.4, 1.5, 1.6, 2.1, 2.2, 2.3, 5.1, 5.2, և 5.3 հավելվածները խմբագրել նոր բովանդակությամբ՝ համաձայն սույն հրամանի՝ 1.1, 1.2, 1.3, 1.4, 1.5, 1.6, 2.1, 2.2, 2.3, 5.1, 5.2, և 5.3 հավելվածների:

2. Հրամանի 1-ին կետի 5-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ <<դ>>, <<ե>>, <<զ>> պարբերություններով.

<<դ. էլեկտրոնային ձևով ապրանքների գնման հայտարարության և հրավերի տեքստերի օրինակելի ձևերը՝ համաձայն հավելված 5.4-ի,

ե. էլեկտրոնային ձևով աշխատանքների գնման հայտարարության և հրավերի տեքստերի օրինակելի ձևերը՝ համաձայն հավելված 5.5-ի,

զ. էլեկտրոնային ձևով ծառայությունների գնման հայտարարության և հրավերի տեքստերի օրինակելի ձևերը՝ համաձայն հավելված 5.6-ի,>>:

3. Հրամանի 1-ին կետը լրացնել նոր՝ 5.1-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

<<5.1) շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգով.

ա. ապրանքների գնման հայտարարության և հրավերի տեքստերի օրինակելի ձևերը՝ համաձայն հավելված 5.1.1-ի,

բ. աշխատանքների գնման հայտարարության և հրավերի տեքստերի օրինակելի ձևերը՝ համաձայն հավելված 5.1.2-ի,

ՖՆ 001718

գ. ծառայությունների գնման հայտարարության և հրավերի տեքստերի օրինակելի ձևերը՝ համաձայն հավելված 5.1.3-ի,

դ. էլեկտրոնային ձևով ապրանքների գնման հայտարարության և հրավերի տեքստերի օրինակելի ձևերը՝ համաձայն հավելված 5.1.4-ի,

ե. էլեկտրոնային ձևով աշխատանքների գնման հայտարարության և հրավերի տեքստերի օրինակելի ձևերը՝ համաձայն հավելված 5.1.5-ի,

զ. էլեկտրոնային ձևով ծառայությունների գնման հայտարարության և հրավերի տեքստերի օրինակելի ձևերը՝ համաձայն հավելված 5.1.6-ի, >>

4. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում 2015թ. ապրիլի 1-ից:

Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ